ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2022թ. թիվ 162-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի
N 200-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշմամբ՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Լոռու մարզի տարահանման պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի «Լոռու մարզի տարահանման պլանը հաստատելու մասին» թիվ 200-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

31/03/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2022թ. մարտի 30
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2022թ. մարտի 30-ի
թիվ 162-Ա որոշման

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մարզի տարածքի համառոտ բնութագիրը

Լոռու մարզը գտնվում է Հայաստանի հյուսիսում: Նրա հյուսիսային սահմանն անցնում է Վիրահայոց լեռներով, արևմուտքում՝ Ջավախքի լեռնավահանով, հարավում՝ Փամբակի լեռնաշղթայով, արևելքում՝ Գուգարաց լեռներով: Սրանց միջև տարածված է Դեբեդ գետի ավազանը երկու հիմնական ենթաշրջանով՝ Լոռվա գոգավորությունով և Փամբակի գոգահովտով, որոնց միմյանցից բաժանում է Բազումի լեռնաշղթան:

Մարզի միջին բարձրությունը ծովի մակարդակից 1600-1700 մ է, առավելագույնը՝ 3196 մ (Ջավախքի լեռնավահանի Աչքասար լեռան գագաթը), իսկ նվազագույնը՝ Դեբեդաշենի դաշտում, որը միաժամանակ ամբողջ Հայաստանի ամենացածրադիր վայրն է (375 մ):

Մարզը սահմանակից է Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի և Տավուշի մարզերին 297 կմ և հյուսիսային կողմից Վրաստանի Հանրապետության հետ՝ 110 կմ, որտեղ ձգվում են Վիրահայոց լեռները: Ադրբեջանի Հանրապետության հետ սահմանամերձ գոտի չունի:

Մարզի ընդհանուր տարածքը կազմում է 3799 քառ. կմ:

Մարզը ունի 16 համայնք, որոնք ընդգրկում են 128 բնակավայր, որից 8 քաղաքային, 120 գյուղական:

Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդն է (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.8%-ը): Բնությունը գեղատեսիլ է, հարուստ անտառներով:

Մարզի բնակչությունը (2021թ. հունվարի 1-ի դրությամբ)՝ 230268 հազ. մարդ է, որոնցից քաղաքներում՝ 126372 մարդ, գյուղերում՝ 103796 մարդ: Բնակչության գրեթե 55%-ը բնակվում է քաղաքներում: Բնակչության խտությունը կազմում է 1 քառ. կմ-ի վրա 7.2 մարդ:

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին, որի երկարությունը մարզի տարածքում կազմում է 114 կմ: Այն անցնում է Սպիտակ, Վանաձոր, Թումանյան, Ալավերդի, Ախթալա քաղաքներով (որոնց երկաթուղային կայարաններում կարող են առաջանալ վտանգավոր նյութերով տրանսպորտային միջոցների կուտակումներ) և 9 գյուղական բնակավայրերով:

Մարզի ավտոճանապարհների ցանկը կազմում է 955.6կմ, որից.

- միջպետական նշանակության ա/ճ – 218,9 կմ.
- հանրապետական նշանակության ա/ճ – 262,8 կմ.
- մարզային (տեղական) նշանակության ա/ճ – 399,1 կմ.
- համայնքների հաշվեկշռում գտնվող ա/ճ – 74,8 կմ:

Մարզում գործում են Մ3 (Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման), Մ6 (Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման), Մ7 (Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման), Մ8 (Վանաձոր-Դիլիջան) միջպետական ավտոճանապարհները, որոնք ամբողջությամբ ծածկված են ամուր ծածկույթով:

Մ6 ճանապարհի թունելների շրջանցումը համարվում է Վանաձոր-թունել-Գյուլագարակ-Թումանյան կայարան երթուղին (երկարացումը կազմում է մոտ 40 կմ): Մարզով է անցնում Մ7 ճանապարհի Ջաջուռի լեռնանցքի հեռավոր շրջանցիկ երթուղին՝ Սպիտակ-Ալագյազ-Արթիկ-Գյումրի (երկարացումը մոտ 100 կմ):

Մարզկենտրոնը Վանաձոր քաղաքն է: Բնակչությունը կազմում է 76,9 հազ. մարդ: Գտնվում է Հանրապետության մայրաքաղաքից 120 կմ հեռավորության վրա:

Մարզի համար բնորոշ են հետևյալ աղետները՝ երկրաշարժեր, սողանքներ, քարաթափումներ, սելավներ, ջրհեղեղներ, անտառային հրդեհներ, ինչպես նաև կարկուտ, ուժեղ քամիներ և ձնաբուք: Մարզի տարածքը գտնվում է ակտիվ սեյսմիկ գոտում, որտեղ հնարավոր երկրաշարժի հզորությունը կազմում է 8-9 բալ: Մարզի տարածքում 9 բալ հզորությամբ երկրաշարժի դեպքում կստեղծվի հետևյալ իրավիճակը՝ բնակելի տներից լրիվ ավերման կենթարկվեն 32%-ը, արդյունաբերական ձեռնարկությունների 18%-ը, թույլ և միջին ավերվածություններ կստանան բնակելի տների, արդյունաբերական և կուլտուր-կենցաղային ձեռնարկությունների 25%-ը, բնակչության անվերադարձ կորուստը կկազմի 2,3%, սանիտարականը՝ 2,7%: Երկրաշարժի հետևանքով հնարավոր է երթևեկության, էլեկտրաէներգիայի և ջրի մատակարարման, կապի համակարգի աշխատանքների խախտումներ և ընդհատում:

Մարզում սելավային հոսքերն առաջանում են Բազումի և Փամբակի լեռնաշղթաների հարավային, Լալվարի ու Լեջան լեռների հարավային և արևմտյան լանջերի ձորակներում:

Դեբեդի ավազանի գետերն աչքի են ընկնում իրենց սելավային ակտիվությամբ: Այստեղ տարածված են հիմնականում ցեխաքարային և ջրաքարային տիպի սելավները: Ցեխային սելավահոսքերով առանձնանում է Փամբակ գետի ավազանը: Այստեղ արձանագրված են բազմաթիվ սելավահոսքեր, որոնցից առավել ակտիվ են Արջուտի և Լերմոնտովոյի ցեխաքարային սելավները:

Սելավների առաջացման դեպքում փողոցների և բնակելի տների մի մասը կլցվեն սելով, հնարավոր է փլուզումների առաջացում, ինչպես նաև ավտոճանապարհների և Ալավերդի-Սպիտակ երկաթուղու Սանահին-Քոբայր հատվածի մի քանի տասնյակ մետր երկաթգծի շարքից դուրս գալը: Սելավավտանգ գոտու բնակիչների թիվը կազմում է 105 մարդ, բնակչության կորուստները կկազմի 2,5%:

Սողանքների հնարավոր հետևանքները կլինեն Վանաձոր-Ալավերդի ավտոմայրուղու Փամբակի և Սանահինի հատվածների, ինչպես նաև Այրում-Վանաձոր երկաթուղու Քոբայր հատվածի մի քանի օրով շարքից դուրս գալը:

Մարզում ջրհեղեղի ընդգրկման հնարավոր մակերեսը կկազմի մոտ 2,6 կմ^2, 599 մարդ բնակչությամբ:

Մարզի բնակչության համար աղետավտանգ ջրամբարներից է Մեծավանի ջրամբարը, որի ծավալը կազմում է 5,4 մլն մ^3, հայելու մակերեսը 330 հա, պատվարի բարձրությունը 7մ, առավելագույն խորությունը 5,5 մ, միջին տարեկան հոսքը 40 մլն մ^3: Մեծավանի ջրամբարի վթարի դեպքում՝ վտանգ է սպառնում Ձյունաշող, Սարատովկա բնակավայրերին և Տաշիրի Գետափնյա թաղամասին:

Մարզում կա քիմիական վտանգավոր մեկ օբյեկտ՝ «Վանաձորի Քիմպրոմ» ՓԲԸ-ի Վանաձորի քիմկոմբինատը: Ներկա ժամանակ այնտեղ պահպանվող ամոնիակ առկա չէ: Քիմկոմբինատում առկա են հեղուկ ամոնիակի պահեստատարաներ 10 հատ, յուրաքանչյուրը 100 մ^3 (8 հատը վերգետնյա, 2 հատը ստորգետնյա՝ վթարային):

2. Տարահանման մասին որոշման ընդունումը և բնակչության ազդարարումը

Տարահանումը բնակչության պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Այն իրականացվում է վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ մարդկանց ժամանակավոր տեղափոխման և տեղաբաշխման միջոցով՝ ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշում, ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսապահովման կարգը հաստատելու մասին» թիվ 824-Ն որոշում:

Տարահանումն իրականացվում է այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում

(բնակավայրերում, օբյեկտներում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և գործունեության բնականում պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:

Տարահանումը կարող է լինել.

1) ընդհանուր, երբ տարահանվում է տարածքի (բնակավայրի) ամբողջ բնակչությունը,

2) մասնակի, երբ տարահանվում է մինչև 16 տարեկան երեխաները, հղի և մինչև 8 տարեկան երեխա ունեցող կանայք, 8-16 տարեկան երեխա ունեցող այն կանայք, որոնց ընտանիքի կազմում չկան տարահանման ենթակա աշխատունակ անդամներ, հաշմանդամները և կենսաթոշակառուները:

Տարահանման մասին որոշում ընդունող մարմիններն են.

1) Տարերային, տեխնածին կամ էկոլոգիական աղետների և այլ բնութի վթարների դեպքում բնակչության տարահանման մասին որոշում ընդունում է մարզպետը, համայնքների և օբյեկտների ղեկավարները, իսկ նրանց բացակայության դեպքում նրանց փոխարինող անձինք: Տարահանման որոշում ընդունող անձը պարտավոր է ընդունված որոշման մասին վթարային հակազդման պլանով սահմանված կարգով տեղեկացնել վթարային հակազդման ազգային համակարգի մեջ մտնող համապատասխան մարմիններին և զեկուցել ՀՀ կառավարությանը:

2) Զենքի տեսակների կիռարման դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է ՀՀ կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի զինվորական կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

3) Տարահանման մասին որոշում ընդունող պաշտոնատար անձը պարտավոր է նշել նաև տարահանման ժամկետները (սկիզբը, ավարտը), ձևը (հետիոտն շարասյուններով, տրանսպորտային միջոցներով) և այլն:

Տարահանման մասին որոշում ընդունելուց հետո կազմակերպվում է տարահանվող տարածքի բնակչության իրազեկում՝ «ՀՀ կառավարություն 2017 թվականի ապրիլի 6-ի Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 346-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Բնակչությանն ազդարարելու մասին որոշումներն ընդունում են.

1) հատուկ կարևորագույն նշանակության օբյեկտներում արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ կազմակերպության ղեկավարը,

2) ջրամբարի պատվարի փլուզման դեպքում՝ ազդարարաման մասին որոշում ընդունվում է մարզային փրկարարական վարչության օպերատիվ ծառայության կողմից,

3) համայնքային նշանակության արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ համայնքի ղեկավարը,

4) մարզային նշանակության արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ մարզպետը,

5) հանրապետական նշանակության արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ ՀՀ վարչապետը,

6) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը (ՀՀ ՊՆ հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հանրապետական կետից ստացած տեղեկության հիման վրա):

Ազդարարման ազդանշանները տրվում են կապի և ազդարարման բոլոր միջոցներով՝ շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ, միացվում են էլեկտրաշչակները և

տրվում անընդհատ («Օդային տագնապ» ազդանշանի դեպքում՝ տատանվող) երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան: Միաժամանակ ազդարարման միջոցներով՝ 2-3 րոպե տևողությամբ տրվում հետևյալ բովանդակությամբ համապատասխան տեքստային հաղորդագրություն. «ՈՒշադրություն, ուշադրություն...»: Անհրաժեշտության դեպքում հաղորդագրությունը լրացվում է «Վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին՝... » բառերով:

Բնակչության ազդարարումն իրականացնում են.

1) հատուկ և կարևորագույն օբյեկտներում՝ տվյալ կազմակերպության ղեկավարը՝ փրկարարական վարչության օպերատիվ ծառայության միջոցով,

2) համայնքներում՝ համայնքի ղեկավարը,

3) մարզում՝ փրկարարական վարչության օպերատիվ ծառայությունը,

4) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման սպառնալիքի դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը:

Ազդարարման մասին որոշումների ընդունման նպատակով արտակարգ իրավի-ճակների դասակարգման չափանիշները սահմանվում են փրկարարական վարչության ղեկավարի կողմից:

Տարահանման հավաքակայանի, տարահանման հանձնաժողովի և ընդունման հավաքակայանի միջև կապի ապահովումն իրականացվում է հեռախոսային և ռադիոկապի միջոցների կիրառմամբ:

Տարահանման հետիոտն և ավտոմոբիլային շարասյուների հետ կապի և ազդարարման իրականացումն ապահովվում է դրանց ուղեկցող՝ ճանապարհային ոստիկանության շարժական և ստացիոնար ռադիո և բջջային կապի, ինչպես նաև կապի օղակների միջոցով:

3. Բնակչության տարահանման միջոցառումների ապահովումը

1) Տրանսպորտային ապահովում

Տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովման հիմնական խնդիրը հանդիսանում է տարահանվողներին փոխադրամիջոցներով ապահովումը:

Տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովումն իրականացվում է մարզի տրանսպորտային ծառայութան միջոցով՝ համաձայն Լոռու մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի ներկայացրած հայտի:

Բնակչության տարահանման համար օգտագործվում են մարդատար ավտոմեքենաներ (ավտոբուսներ, թեթև մարդատար ավտոմեքենաներ): Անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել թափքավոր և ինքնաթափ բեռնատար ավտոմեքենաներ և ավտոկցորդներ, որոնք նախապես պետք է հարմարեցնել մարդկանց փոխադրելու համար: Տարահանումն իրականացնող տրանսպորտային միջոցներն ապահովվում են մարզի ոստիկանության վարչության տված անցագրերով:

Տարահանման ավտոշարասյուների բաշխումն ըստ տարահանման հավաքակա-յանների (բնակավայրերի) իրականացվում է սույն պլանով նախանշված կարգով, Անհրաժեշտ տրանսպորտային միջոցների հաշվարկները և նրանց բաշխումը, (հավելված 3.1) ելնելով ԱԻ բնույթից և տարահանվողների թվաքանակից:

Պատերազմական պայմաններում ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Լոռու մարզային տարածքային ստորաբաժանմանն ամրագրված ավտոշարասյուներ չեն ընդգրկվում: Անձնական օգտագործման թեթև մարդատար ավտոմեքենաներն օգտագործվում են մեկ երթով:

Տարահանման ավտոշարասյուներում ընդգրկվող տրանսպորտային միջոցների պատրաստականությունը մշտական տեղակայման վայրերում սահմանվում է 4-6 ժամ համապատասխան հրահանգ ստանալու պահից:

2) Բժշկական ապահովում

Տարահանվող բնակչության բժշկական ապահովման համար տարահանման և տարահանվող բնակչության ընդունման բոլոր հավաքակայաններում ստեղծվում են բժշկական կետեր:

Բնակչության ընդունման բնակավայրերում բնակչության խտության (թվաքանակի) ավելացման հետ կապված, մարզի բժշկական ծառայության պլանով նախատեսված կարգով, տարահանված բնակավայրերի բուժ. աշխատողների հաշվին ավելացվում են բուժ. սպասարկման անձնակազմերը:

Տարահանվողների անհետաձգելի բուժօգնության նպատակով յուրաքանչյուր շարասյունում ընդգրկվում է բուժաշխատող, ապահովված համապատասխան բուժգույքով:

Ավտոշարասյուների երթի ընթացքում տարահանվող բնակչության մասնագիտական բուժսպասարկումն իրականացվում է այն տարածքի բուժծառայու-թյունների կողմից, որով ընթանում է շարասյունը:

Նշված աշխատանքների իրականացման կազմակերպումն ու վերահսկումը դրվում է մարզի բժշկական ծառայության վրա, համաձայն ՀՀ առողջապահության նախարարության առաջադրանքների:

3) Հասարակական անվտանգության ապահովում

Տարահանվող բնակավայրերում հասարակական անվտանգության ապահովման միջոցառումներն իրականացնում են հասարակական կարգի պահպանության ծառայության ուժերը:

Հիմնական խնդիրը հանդիսանում է հասարակական կարգի պահպանումը տարահանվող և ընդունող բնակավայրերում, հավաքակայաններում և շարասյուների երթի ընթացքում:

Ուժերի և միջոցների բաշխումն ըստ առանձին հավաքակայանների և երթուղիների իրականացվում է համաձայն մարզի հասարակական կարգի պահպանության ծառայության պլանի:

Այդ նպատակով տարահանման հավաքակայաններում ստեղծվում են համապա-տասխան ծառայություններ, իսկ երթուղիներում՝ երթի կարգավորման և վերահսկման շարժական և ստացիոնար կետեր:

Հասարակական կարգի պահպանման ծառայությունն ընդգրկվում է նաև բնակչության ազդարարման և վարվելակերպի կանոնների հաղորդման գործընթացում:

Ծառայության ուժերով իրականացվում է պարետային ծառայություն տարահանվող բնակավայրերում, հավաքակետերում և երթուղիներում:

Ծառայությունն իրականացնում է նաև տարահանվող տարածքների կարևոր օբյեկտների պահպանումը:

4) Ինժեներական միջոցառումների ապահովում

Տարահանման ինժեներական ապահովման հիմնական խնդիրը հանդիսանում է բնակչության տարահանման և ընդունման հավաքակայաններում տարահանվողների և սպասարկող անձնակազմի կոլեկտիվ պաշտպանության կազմակերպումն ու իրականացումը, ինչպես նաև տարահանման երթուղիների անցունակության և ճանապարհային կառույցների (կամուրջ, անցուղիներ) և երթին խոչընդոտող այլ երևույթների (սողանք, զենքի կիրառման հետևանքով առաջացած խոչընդոտներ) հետևանքների վերացումը:

Այդ նպատակով տարահանման հանձնաժողովների և հավաքակայանների կազմում ընդգրկված ինժեներական ծառայությունները մշակում են գործողությունների պլաններ, երթուղիների անցունակության ապահովման պլաններ, որոշում են ինժեներական հետախուզության ու վթարների հետևանքների վերացման ուժերն ու միջոցները:

Տարահանվողների պատսպարման նպատակով տարահանման հավաքակայաններում և բնակչության ընդունման բնակավայրերում պատրաստ դրության են բերվում շենքերի

նկուղային կամ առաջին հարկերի տարածքները, և դրանք հարմարեցվում մարդկանց պատսպարման և կենսաապահովման համար:

II. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՋԵՆՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՏԱՐԱՀԱՆՈՒՄ

Մարզի սահմանամերձ գոտու բնակչության տարահանումը նախատեսվում է իրականացնել պետական սահմանին հարակից 10կմ գոտում գտնվող բնակավայրերից՝ բնակչության մասնակի տարահանման եղանակով:

Տարահանվող բնակչությունը ժամանակավորապես վերաբնակեցվում է պետական սահմանից 15 կմ-ից դուրս գտնվող ժամանակավոր տեղակայման կետերում (ԺՏԿ), բնակավայրերում, ուր և տարահանվողներն ապահովվում են ժամանակավոր կացարաններով, սննդամթերքով, բուժսանիտարական սպասարկմամբ, ինչպես նաև առաջնահերթ անհրաժեշտության կենսապահովման այլ պայմաններով: Այնուհետև ելնելով իրավիճակից տեղափոխվում են երկարատև բնակության կետեր (ԵԲԿ)

Մարզին սահմանակից է Վրաստանը՝ հյուսիսից:

Մարզի սահմանամերձ գոտում ընդգրկվում են 5 բնակավայր, ազգաբնակչությամբ 770 մարդ, որից տարահանվողների թվաքանակը կազմում է 475 մարդ (Հավելված 3.2): Տավուշի մարզի սահմանամերձ գոտուց 5 բնակավայր, որի տարահանվողների թվաքանակը կազմում է 2286 մարդ ազգաբնակչություն, տարհանվում են մարզի 5 բնակավայրերում:

Որպես կանոն տարահանվող բնակչության ժամանակավոր բնակեցումն իրականացվում է մարզի բնակավայրերում: Սահմանամերձ գոտու 5 բնակավայրերից տարահանվող բնակչության ընդունումն ու տեղաբաշխումն իրականացվում է անվտանգ գոտու՝ միևնույն մարզի 5 բնակավայրերում:

Սահմանամերձ գոտու բնակչության տարահանումն իրականացվում է ՀՀ կառավարության որոշմամբ: Հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում առանձին բնակավայրերից բնակչության մասնակի տարահանում կարող է իրականացվել նաև պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և տվյալ տարածքի զինվորական կայազորի պետի համատեղ որոշմամբ:

III. ՄԵԾԱՎԱՆԻ ՋՐԱՄԲԱՐԻ ՊԱՏՎԱՐԻ ՓԼՈՒԶՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՋՐԱԾԱԾԿՄԱՆ ԳՈՏՈՒՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՈՒՄ

Վտանգավոր ջրամբարների պատվարների փլուզման դեպքում ջրածածկման գոտու բնակավայրերի բնակչության պաշտպանության հիմնական ձևը նրանց տարահանումն է և անվտանգ տարածքում ժամանակավոր վերաբնակեցումը:

Պատվարի փլուզման դեպքում բնակավայրերի ջրածածկման սպառնալիք է ներկայացնում մարզի տարածքում գտնվող Մեծավանի ջրամբարը:

Ջրամբարի պատվարի փլուզման և դրա հետևանքով վտանգավոր ջրածածկման ժամանակահատվածը հիմնականում ապրիլ-օգոստոս ամիսներն են, երբ դրանում ջրի մակարդակը (ծավալը) հասնում է առավելագույնի: Մնացած ամիսներին ջրամբարը վտանգ չի ներկայացնում:

Ելնելով ջրածածկման ենթակա բնակավայրերի դիրքից և բնակչության տարահանման ու ԺՏԿ հնարավորություններից, նախատեսվում է.

1) այն բնակավայրերում, ուր ըստ նախնական հաշվարկների կջրածածկվեն բնակելի տների մինչև 10 տոկոսը, բնակչութանը տեղափոխել նույն բնակավայրի չջրածածկվող տարածք,

2) 10 տոկոսից ավելի ջրածածկվող բնակավայրերից տարահանվող բնակչությանը տեղափոխել այլ բնակավայր, որպես կանոն նույն մարզի տարածքում (Հավելված 3.3):

IV. «ՎԱՆԱՁՈՐԻ ՔԻՄՊՐՈՄ» ՓԲԸ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԻՄԿՈՄԲԻՆԱՏԻ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՕԲՅԵԿՏԻ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՎԱՐԱԿԱՎՏԱԳ ՏԱՐԱԾՔԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՈՒՄ

Քիմիական վտանգավոր օբյեկտներ են հանդիսանում արդյունաբերական, գիտահետազոտական և այլ բնույթի այն կազմակերպությունները (ձեռնարկությունները), որոնք օգտագործում, արտադրում, վերամշակում, պահում կամ փոխադրում են բնակչության և շրջակա միջավայրի համար վտանգ ներկայացնող քիմիական նյութեր:

Աշխատող անձնակազմի և հարակից վարակավտանգ տարածքի բնակչության տարահանում նախատեսվում է այն քիմիական վտանգավոր օբյեկտներից, որոնց վթարի դեպքում կարող է առաջանալ ՈՒՆԹՆ-ի արտանետում (արտահոսք):

Մարզի տարածքում նշված օբյեկտների թիվը կազմում է 1, որոնցում պահպանվում է հեղուկացված ամոնիակ (Հավելված 5):

Նկատի ունենալով քիմիական վտանգավոր օբյեկտների վթարի հետևանքների անմիջական առնչվածությունը տվյալ պահին օդերևութաբանական իրավիճակի (քամու ուղղություն, արագություն, տեղումներ, հողի և վերգետնյա մթնոլորտի ջերմաստիճան և այլն), դրա անկանխատեսելի փոփոխությունների, ինչպես նաև ՈՒՆԹՆ-ի ծավալի հետ, վտանգավոր օբյեկտներից և հարակից վարակավտանգ տարածքից տարահանվող բնակչության համար որպես ժամանակավոր կացարաններ նախատեսվում են հաշվարկներով նախանշված վարակավտանգ տարածքից դուրս բնակավայրերը (տեղանքը), որոնք ճշգրտվում են վթարի սպառնալիքի կամ անմիջական վթարի դեպքում և անհապաղ տեղեկացվում բնակչությանը:

Քիմիական վտանգավոր օբյեկտում վթարի սպառնալիքի դեպքում օբյեկտի աշխատող անձնակազմի և հարակից վարակավտանգ տարածքի բնակչության ազդարարման և տարահանման վերաբերյալ որոշում ընդունում է այն տարածքի ՔՊ պետը, ուր գտնվում է տվյալ օբյեկտը: Որպես որոշման հիմք հանդիսանում է տվյալ օբյեկտի պետից ստացված և ճշգրտված տեղեկությունը վթարի սպառնալիքի մասին:

Տարահանման ժամկետները (սկիզբը և ավարտը) սահմանում է տարահանման մասին որոշում ընդունող պաշտոնատար անձը, որը և ճշտում է տարահանման երթուղիները և մոտակա անվտանգ տարածքները:

Տարահանման հավաքակայանների և ընդունման կետերի ծավալման վայրերը որոշվում են ելնելով օդերևութաբանական իրավիճակից (քամու ուղղություն, արագություն և այլն) և տեղեկացվում բնակչությանը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

31/03/2022

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ. ԱՇՐԱՖՅԱՆ

V. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելվածի համարը	Հավելվածի անվանումը	Թերթերի քանակը
1	ՀՀ Լոռու մարզպետի 18.03.2022թ. թիվ 137-Ա որոշում:	2
1.1	Հավելված 1 Կազմ Լոռու մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի:	1
1.2	Հավելված 2 Կանոնադրություն՝ Լոռու մարզի տարահանման հանձնաժողովի	4
1.3	Հավելված 3 Լոռու մարզի տարահանման հանձնաժողովի աշատանքային խմբերի կազմեր:	2
2.	ՀՀ Լոռու մարզի տարահանման հանձաժողովի պաշտոնատար անձանց պարտականությունները:	14
3	Լոռու և Տավուշի մարզերի սահմանամերձ գոտու բնակավայրերի բնակչության տարահանման կարգը:	1
3.1	Լոռու մարզի սահմանամերձ գոտու բնակավայրերի բնակչության տարահանման անհրաժեշտ տրանսպորտային միջոցների հաշվարկները և նրանց բաշխումը	1
3.2	Տավուշի մարզի սահմանամերձ գոտու բնակավայրերի բնակչության տարահանման անհրաժեշտ տրանսպորտային միջոցների հաշվարկները և նրանց բաշխումը	1
3.3	Տավուշի մարզի սահմանամերձ գոտու բնակավայրերի բնակչության տարահանման պլան (տարահանվում է երկաթուղով):	1
3.4	Լոռու և Տավուշի մարզերի բնակչության տարահանման հաշվարկ:	1
3.5	Լոռու մարզի սահմանամերձ գոտու բնակավայրերից տարահանվող բնակչության տեղավորման հաշվարկ:	1
	Տավուշի մարզի սահմանամերձ գոտու բնակավայրերից տարահանվող բնակչության տեղավորման հաշվարկ:	1
	Լոռու մարզի սահմանամերձ գոտու բնակավայրերից տարահանվող բնակչության սննդամթերքով ապահովման պահանջարկը 1 օրվա համար:	1
	Տավուշի մարզի սահմանամերձ գոտու բնակավայրերից տարահանվող բնակչության սննդամթերքով ապահովման պահանջարկը 1 օրվա համար:	1
4.	Մեծավանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ջրածածկման գոտուց բնակչության տարահանման հաշվարկ:	1
5.	Վանաձորի Քիմպրոմ՝ ՓԲԸ Վանաձորի քիմկոմբինատի վթարի դեպքում վարակավտանգ տարածքի բնակչության տարահանման հաշվարկ:	1
6.	Հանձնաժողովի կազմի և ազդարարման ուրվագիծ:	1
7.	Հանձնաժողովի անդամների հերթապահության գրաֆիկ:	1
8.	Հանձնաժողովի աշխատանքների օրացուցային պլան:	2
9	Լոռու մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման քարտեզ (Մ 1: 100.000):	1
10	Հիմնական հասկացություններ:	1
11	Հաշվարկ Լոռու մարզի սահմանամերձ գոտուց բնակչության ԵՏԿ-ի և բնակչության ամրագրման	1

Հավելված 2.
Լոռու մարզի տարահանման պլանի

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ ԼՄՓՎ) հետ համատեղ մշակում է բնակչության տարահանման պլանը:

2. Քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) ծառայությունների հետ համատեղ մշակում է տարահանվող բնակչության պաշտպանությանն ու համակողմանի ապահովմանն ուղղված միջոցառումները:

3. Կազմակերպում է տարահանման (ընդունման) հավաքակայանների վարչակազմի նախապատրաստումը:

4. Իրականացնում է հսկողություն համայնքներում տարահանման հանձնաժողովների ստեղծման և նախապատրաստման նկատմամբ:

5. Իրականացնում է հսկողություն համայնքների տարահանման հանձնաժողովների պատրաստականության բերման նկատմամբ:

6. Ճշտում է բնակչության տարահանման պլանը, համակողմանի ապահովման միջոցառումները:

7. Կազմակերպում է տարահանման երթուղիների նախապատրաստումը: Հսկում է տարահանված բնակչության ընդունման հավաքակայանների նախապատրաստումը ընդունելության համար:

8. Կապ է պահպանում բնակավայրերի, օբյեկտների հետ, որտեղից բնակչությունը նախատեսվում է տեղաբաշխել մարզի տարածքում և նրանց ծանոթացնում է տարահանման տեղանքի հետ:

9. Բնակչության տարահանման իրականացման վերաբերյալ կարգադրություն ստանալուց հետո՝

1) Կազմակերպում է տարահանման հավաքակայանների ծավալումը,

2) Վերահսկում և կոորդինացնում է համայնքների տարահանման հանձնաժողովների աշխատանքը,

3) Հավաքում և ամփոփում է տվյալներ մեկնման (ժամանման) մասին, բնակչության տեղաբաշխման մասին զեկուցում է վերադաս տարահանման հանձնաժողովին,

4) Համապատասխան ՔՊ ծառայությունների հետ համատեղ կազմակերպում է մեկնող (ժամանող) բնակչության պաշտպանությունը և համակողմանի ապահովումը:

II. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10. Կազմակերպում է բնակչության հավաքը, հաշվառումը և ուղարկումը տեղաբաշխման կետեր տրանսպորտով և հետիոտն կարգով:

11. Զեկուցում է տարահանման հանձնաժողովին բնակչության քանակի և ժամանման /մեկնման/ ժամկետների մասին:

12. Կազմակերպում է հավաքակայանում գտնվող բնակչությանը առաջին բժշկական օգնության ցուցաբերումը:

13. Ապահովում է հասարակական կարգի պահպանումը, բնակչության պատսպարումը:

III. ՏԱՐԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

14. Դիմավորում է ժամանող գնացքները, ավտոմոբիլային և հետիոտն շարասյուները և իջեցման կետի վարչակազմի հետ համատեղ ապահովում է բնակչության իջեցումը:

15. Կազմակերպում է մարդկանց ժամանակավոր տեղավորումը մոտակա բնակավայրերում:

16. Բնակչությանը ուղարկում է մշտական տեղակայման վայրեր:

17. Զեկուցում է մարզային (հանրապետական) հանձնաժողովին բնակչության քանակի և ժամանման (մեկնման) ժամկետների մասին:

18. Կազմակերպում է բնակչության բժշկական օգնության ցուցաբերումը:

19. Ապահովում է հասարակական կարգի պահպանումը և բնակչության պատսպարումը ՔՊ ազդանշաններով:

20. Դիմավորում է ժամանող գնացքները, ավտոմոբիլային և հետիոտն շարասյուները և իջեցման կետի վարչակազմի հետ համատեղ ապահովում է բնակչության ընդունումը, հաշվառումը և տեղաբաշխումը:

IV. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏԻՈՏՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՇԱՐԱՍՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Հետիոտն շարասյան պետը նշանակվում է համայնքի (օբյեկտի) քաղպաշտպանության պետի հրամանով:

22. Հետիոտն շարասյան պետի հիմնական խնդիրն է ապահովել կարգ ու կանոնն ու կազմակերպվածությունը շարասյունում, շարասյան երթը ըստ տրված երթուղու և ելակետով ժամանակին անցումը:

23. Հետիոտն շարասյան պետը ենթարկվում է քաղպաշտպանության շտաբի պետին, համայնքի (օբյեկտի) տարահանման հանձնաժողովի ներկայացուցչին և տարահանման հավաքակայանի պետին:

24. Հետիոտն շարասյան պետը պարտավոր է մինչ տարահանման անցկացման վերաբերյալ հրահանգ ստանալը իմանալ շարասյունում տարահանվող բնակչության կազմը և թվաքանակը, շարասյունը բաժանել խմբերի ըստ ցուցակի, նշանակել խմբերի ավագներ, նախօրոք ուսումնասիրել երթուղին:

25. Տարահանման անցկացման վերաբերյալ կարգադրությունը ստանալուց հետո՝

1) սահմանված ժամկետում ներկայանում է տարահանման հավաքակայան և նրա վարչակազմի հետ համատեղ կազմավորում է շարասյունը.

2) համայնքի /օբյեկտի/ տարահանման հանձնաժողովի նախագահից ստանում է քաղվածք երթի սխեմայից և տարահանվող բնակչության ցուցակը.

3) նշված ժամկետում շարասյունը դուրս է բերում ելման կետ, զեկուցում երթուղու պետին և նրա թույլտվությամբ սկսում շարժվել ըստ երթուղու.

26. Երթի ժամանակ՝

1) շարասյունը տանում է նշված երթուղով, ապահովելով կարգավորման կետերի անցումը սահմանված ժամկետներում.

2) երթի ընթացքում և դադարի վայրերում պահպանում է կարգապահությունը և կարգ ու կանոնը շարասյունում, ձեռք է առնում միջոցներ հետ մնացածներին հավաքելու և հիվանդներին օգնություն ցույց տալու համար.

3) «Օդային տագնապ» կամ «Ուշադրություն բոլորին» ազդանշան ստանալու դեպքում անհապաղ այն հասցնում է տարահանվողներին և ձեռնարկում է միջոցներ մարդկանց պատսպարելու համար.

4) ճառագայթային աղտոտման սպառնալիքի դեպքում մարդկանց թաքցնում է տեղում կամ երթուղու պետի ցուցումով դուրս է բերում նրանց անվտանգ շրջաններ:

27. Հավաքակայան ժամանելուն պես հաղորդում է տարահանման տեղական հանձնաժողովին շարասյան կազմի ու թվաքանակի մասին և մասնակցում է մարդկանց տեղավորման աշխատանքին:

V. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԱՎՏՈՇԱՐԱՍՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

28. Ավտոշարասյան պետը նշանակվում է համայնքի (օբյեկտի) ՔՊ պետի հրամանով և ենթարկվում է համայնքի (օբյեկտի) տարահանման հանձնաժողովի նախագահին, ինչպես նաև տարահանման հավաքակայանի պետին:

29. Ավտոշարասյան պետը պատասխանատու է տեղափոխվող բնակչության շրջանում կարգ ու կանոնի պահպանման համար:

30. Ավտոշարասյան պետը պարտավոր է՝

1) մինչև բնակչության տարահանման անցկացման վերաբերյալ կարգադրություն ստանալը՝

ա. ստուգել տեղափոխվող բնակչության կազմը և քանակը, որոշել ինչպիսի մեքենաներ են հատկացված, նրանց քանակը, հավաքակայանի տեղը, մարդկանց ավտոտրանսպորտ նստեցնելու տեղը, տեղավորման երթուղին, իջեցման տեղը, ավտոմեքենաներով տեղափոխման կանոնները, անվտանգ գոտում նրանց տեղավորման վայրը.

բ. յուրաքանչյուր մեքենայում նշանակել ավագներ և հրահանգավորել նրանց.

2) տարահանման մասին որոշում ընդունելուց հետո համայնքի (օբյեկտի) տարահանման հանձնաժողովից ստանալ՝

ա. ավտոշարասյունով տեղափոխվող բնակչության ցուցակը.

բ. ժամանակին ներկայանալ հավաքակայան և հավաքակայանի ղեկավարության հետ միասին ստուգել մարդկանց քանակը, նրանց տեղաբաշխումը ըստ ավտոմեքենաների և կազմակերպում է նստեցումը ավտոմեքենաներ.

3) երթուղու ամբողջ երկայնքով պահպանել տեղափոխման կարգն ու կանոնը

4) նշանակված վայր հասցնելուց հետո ապահովել մարդկանց կազմակերպված իջեցումը:

31. Տարահանման տեղական հանձնաժողովին (ընդունման հավաքակայանին) հանձնում է տարահանվածներին և շարասյան փաստաթղթերը:

VI. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏԻՈՏՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՐԹՈՒՂՈՒ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32. Երթուղու պետը նշանակվում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումով:

33. Երթուղու պետի հիմնական խնդիրներն են

1) ապահովում է ղեկավարումը,

2) պահպանում է հասարակական կարգն ու կանոնը և կարգավորել երթուղու շարժումը,

3) տարահանման տեղական մարմինների հետ համատեղ ապահովում է տարահանվող բնակչության ուղեկցումը տարահանման վերջնական կետեր սահմանված ժամկետներում.

34. Երթուղու պետը ենթարկվում է քաղպաշտպանության պետին և տարահանման հանձնաժողովի նախագահին:

35. Երթուղու պետը իրավունք ունի հսկելու ՔՊ պլաններով նախատեսված երթուղու նախապատրաստման միջոցառումների կատարումը, տարահանված բնակչության կենսաապահովումը, ինչպես նաև տարահանման վերջնական կետերը նրանց տեղավորման միջոցառումների կատարումը:

36. Երթուղու պետը պարտավոր է՝

1) նախօրոք ուսումնասիրել հետիոտն շարասյան երթուղին և սխեման

2) բաժանել երթուղին ըստ հատվածների, ղեկավարման խմբերի միջև

3) տարահանման մասին որոշում ընդունելուց հետո ՔՊ համապատասխան շտաբից ստանալու երթուղու սխեման, խնդիր դնել ղեկավար խմբերի և հատկացված ուժերի առջև և հսկել դրանց կատարումը.

4) հսկողություն իրականացնել տարահանվող բնակչությանը բժշկական օգնության ցուցաբերման կարգի նկատմամբ.

5) կազմակերպել ճառագայթային և քիմիական դիտարկումներ.

6) պահպանել կապը հետիոտն և ավտոշարասյան, տարահանման ընդունման հավաքակայանների հետ, կազմակերպել ազդարարումը երթուղու ամբողջ երկայնքով.

7) «Օդային տագնապ» կամ «Ուշադրություն բոլորին» ազդանշան ստանալիս անհապաղ փոխանցել շարասյուններին, օգտագործելով կապի բոլոր միջոցները, միջոցառումներ ձեռնարկել պատսպարման համար:

VII. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

37. Հանձնաժողովի նախագահ-ՔՊ պետի տեղակալ

38. Հանձնաժողովի նախագահի տեղակալ

39. Հանձնաժողովի քարտուղար՝

40. ՔՊ ծառայությունների ներկայացուցիչներ.

1) Տրանսպորտի և կապի

2) Ինժեներական և կոմունալ-տեխնիկական

3) Բժշկական

4) Էներգետիկայի

5) Առևտրի և սննդի

6) Նյութատեխնիկական մատակարարման

7) Բույսերի և կենդանիների պաշտպանության

8) Հասարակական կարգի պահպանման

9) Բնակչության հատուկ սպասարկումների

10) Գազասպասարկման:

41.Հանձնաժողովի աշխատանքային խմբերի պետեր.

1) Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբի պետ

2) Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խմբի պետ

3) Տրանսպորտային ապահովման խմբի պետ

4) Սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խմբի պետ

5) Հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման հաշվառման խմբի պետ:

VIII. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

42. Տարահանման հանձնաժողովի նախագահը նշանակվում է մարզպետի՝ ՔՊ պետի որոշմամբ և ենթարկվում է մարզի ՔՊ պետին:

43. Տարահանման հանձնաժողովի նախագահը պատասխանատու է հնարավոր աղետի գոտուց բնակչության կազմակերպված դուրս բերման ուղղությամբ անցկացվող համալիր միջոցառումների, ինչպես նաև տարահանված բնակչության անվտանգ տարածքներում առաջնահերթ կենսաապահովման միջոցառումներով ապահովված ժամանակավոր տեղաբաշխման կետերում (այսուհետ՝ ԺՏԿ) բաշխման կազմակերպման համար:

44. Տարահանման հանձնաժողովի նախագահը կրում է պատասխանատվություն տարահանման հանձնաժողովի վրա դրված բոլոր խնդիրների ժամանակին և ողջ ծավալով կատարման համար:

45. Նա պարտավոր է՝

1) Իմանալ տարահանման հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև ստորադաս տարահանման հանձնաժողովների և տարահանման հավաքակայանների նախագահներին,

2) Իմանալ բոլոր հնարավոր արտակարգ իրավիճակների դեպքերում տարահանման միջոցառումների անցկացման ժամանակ տարահանման հանձնաժողովի վրա դրված խնդիրները,

3) Մասնակցել բնակչության տարահանման հետ կապված հիմնական փաստաթղթերի մշակմանն ու ճշտգրտմանը,

4) Իմանալ տարահանման ենթակա բնակչության թվաքանակը, տարահանման միջոցառումների անցկացման ժամկետները, տարահանման փոխադրումներին ներգրավված ավտոմեքենաների և այլ տրանսպորտային միջոցների քանակը,

5) Տարահանման հանձնաժողովի անձնակազմի հետ պարբերաբար անցկացնել մեթոդական պարապմունքներ տարահանման պլանների և տարահանման միջոցառումների պլանավորման ու անցկացման հետ կապված ղեկավար փաստաթղթերի ուսուցման ուղղությամբ:

46. Սպառնալիքի դեպքում՝

1) Ներկայանալ ՔՊ պետին,

2) Կազմակերպել տարահանման հանձնաժողովի անձնակազմի ազդարարումը և հավաքը սահմանված ժամկետներում,

3) Ճշգրտել տարահանման հանձնաժողովի անձնակազմի աշխատանքային գրաֆիկը և տալ հանձնարարականներ ստորադաս տարահանման և տարահանվողների ընդունման հանձնաժողովին բոլոր տարահանման մարմինները աշխատանքներին պատրաստականության բերելու ուղղությամբ,

4) Կապ հաստատել ստորադաս տարահանման մարմինների և տրանսպորտային կազմակերպությունների հետ,

5) Ճշգրտել տարահանման հանձնաժողովի պլանը և տրանսպորտային միջոցների բաշխման հաշվարկները,

6) Կազմակերպել տարահանման երթուղիների, ԺՏԿ-երի, ԵԲՎ-երի և նստեցման կետերի նախապատրաստումը, ճանապարհային նշանների ու ցուցանակների տեղադրումը,

7) Կազմակերպել կապի և ազդարարման համակարգերի պատրաստականության ստուգումը,

8) Բոլոր տարահանման մարմիններում սահմանել ղեկավար կազմի շուրջօրյա հերթապահություն,

9) Ընդունել պատրաստականության մասին ենթակա տարահանման մարմինների զեկույցները և զեկուցել ՔՊ պետին:

47. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում՝

1) Ներկայանալ պետին և ճշտգրտել տարահանման հանձնաժողովի խնդիրները տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում,

2) Կազմակերպել տարահանման հանձնաժողովի անդամների հավաք, ճշգրտել նրանց խնդիրները և տալ հանձնարարականներ ենթակա տարահանման և տրանսպորտային մարմիններին՝ (պլանի կամ աղետի գոտում ստեղծված իրավիճակի գնահատականի համաձայն) բնակչության տարահանման անցկացման ուղղությամբ,

3) Պատրաստականության բերել բոլոր տարահանման մարմինները և կազմակերպել նրանց հետ անընդհատ կապ,

4) Կազմակերպել տարահանման ենթակա բնակչության հավաքը, նախապատրաստումը և փոխադրումը անվտանգ տարածքներ,

5) Վերահսկել նստեցման կետերին տրանսպորտային միջոցների ժամանակին հասցնումը,

6) Կազմակերպել անապաստան մնացած բնակչության առաջնահերթ կենսաապահովումը,

7) Կազմակերպել բնակչության տարահանման, պլանավորված անվտանգ տարածքներում բնակչության տեղաբաշխման ընթացքի մասին տվյալների հավաքը,

8) ՔՊ ծառայությունների հետ փոխհամագործակցության ժամանակ կազմակերպել տարահանված բնակչության ապահովումն ու պաշտպանությունը,

9) Ժամկետային տեղեկացման քարտում նշված ժամկետներում տարահանման միջոցառումների ընթացքի մասին զեկուցել ՔՊ պետին:

IX. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

48. Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը ենթարկվում է հանձնաժողովի նախագահին, իսկ նրա բացակայության ժամանակ կատարում նրա պարտականությունները լրիվ ծավալով: Տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում նա հանդիսանում է տարահանման հանձնաժողովի ողջ անձնակազմի անմիջական ղեկավարը:

49. Նա պարտավոր է՝

1) Իմանալ տարահանման հանձնաժողովի բոլոր անդամներին, ինչպես նաև ստորադաս տարահանման հանձնաժողովների և տարահանման հավաքակետերի նախագահներին.

2) Իմանալ տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում հանձնաժողովի անդամների ազդարարման կարգը և հանձնաժողովի վրա դրված խնդիրները.

3) Հանձնաժողովների նախագահի հետ միասին մասնակցել բնակչության տարահանման պլանի մշակմանն ու ճշգրտմանը.

4) Մասնակցել տարահանման հանձնաժողովի փաստաթղթերի մշակմանը.

5) Տարահանման հանձնաժողովի նախագահի հետ միասին տարահանման մարմինների ղեկավարման, կապի ու ազդարարման համակարգերը նախապատրաստել և պահել մշտական պատրաստ վիճակում.

6) Իմանալ տարահանման ենթակա բնակչության թվաքանակը, միջոցառումների անցկացման ժամկետները և տարահանման փոխադրումներին ներգրավված տրանսպորտի քանակը.

7) Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների հետ փոխհամագործակցության ժամանակ մշակել միջոցառումներ տարահանված բնակչությանը սննդամթերքով, ջրով, էլեկտրաէներգիայով և առաջին անհրաժեշտության իրերով ապահովելու համար.

50. Սպառնալիքի դեպքում՝

1) Կազմակերպել տարահանման հանձնաժողովի անձնակազմի ազդարարումը, վերահսկել նրանց հավաքը և զեկուցել տարահանման հանձնաժողովի նախագահին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահի անունից պատրաստել կարգադրություններ և կազմակերպել դրանց հասցնումը կատարողներին և իրականացնել կատարաման հսկողությունը,

3) Վերահսկել ստորադաս տարահանման մարմինների պարտականությունների կատարումը,

4) Տարահանման հանձնաժողովի աշխատանքային մարմիններում կազմակերպել շուրջօրյա հերթապահություն,

5) Տարահանման հանձնաժողովի անձնակազմի համար կազմակերպել անհատական պաշտպանության միջոցների ստացումը,

6) Մասնակցել կոնկրետ արտակարգ իրավիճակների դեպքում տարահանման պլանի ճշգրտմանը:

51. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում՝

1) Հավաքել տարահանման հանձնաժողովի անդամներին և զեկուցել հանձնաժողովի նախագահին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահի անունից պատրաստել կարգադրություններ, կազմակերպել դրանց հասցնումը կատարողներին և իրականացնել կատարման հսկողությունը,

3) Ստուգել ՔՊ տրանսպորտի և կապի ծառայության և ստորադաս տարահանման մարմինների հետ կապի առկայությունը,

4) Ճշգրտել տարահանման միջոցառումներին տարահանման մարմինների պատրաստականությունը և զեկուցել հանձնաժողովի նախագահին.

5) Վերահսկել տրանսպորտային միջոցների հասցնումը նստեցման կետեր,

6) Վերահսկել տարահանմանն ենթակա բնակչության հավաքը, նախապատրաստումը փոխադրման և փոխադրումը անվտանգ տարածքներ,

7) Ընդհանրացնել տարահանման ընթացքի, տարահանման բնակչության ընդունման և տեղաբաշխման մասին ենթակա տարահանման հանձնաժողովներից ստացված տվյալները և զեկուցել հանձնաժողովի նախագահին.

8) Իմանալ ստեղծված իրադրությունը և տեղեկացնել հանձնաժողովի անդամներին,

9) Ժամկետային տեղեկացման քարտում նշված ժամկետներում տարահանման միջոցառումների ընթացքի և ավարտի մասին պատրաստել ամփոփագիր:

X. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

52. Տարահանման հանձնաժողովի քարտուղարը ենթարկվում է հանձնաժողովի նախագահին և տեղակալին: Նրանց հանձնարարությամբ տարահանման հանձնաժողովի անձնակազմին և ենթակա տարահանման մարմիններին հասցնում է տեղեկատվություններ, հանձնարարականներ և տարբեր բնույթի հրամաններ:

53. Նա պարտավոր է՝

1) Իմանալ իր պարտականությունները, տարահանման հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքը և հանձնաժողովի առջև դրված խնդիրները:

2) Իմանալ ենթակա տարահանման մարմինների տեղաբաշխման վայրերը և նրանց ազդարարման կարգը:

3) Մասնակցել տարահանման հանձնաժողովի փաստաթղթերի կազմմանը:

4) Տարահանման հանձնաժողովի կողմից որևէ մեկի հեռանալու դեպքում զեկուցել նախագահին և միջոցներ ձեռք առնել հանձնաժողովի կազմը լրացնելու համար:

54. Սպառնալիքի դեպքում՝

1) Ստանալ տարահանման հանձնաժողովի փաստաթղթերը:

2) Ստուգել հանձնաժողովի անդամների հավաքը և զեկուցել նախագահին:

3) Ենթակա տարահանման մարմինների համար պատրաստել տարահանման հանձնաժողովի նախագահի կարգադրությունը:

4) Ստանալ անհատական պաշտպանության միջոցները և բաժանել հանձնաժողովի անդամներին:

5) Ստուգել տարահանման հանձնաժողովի պատրաստականությունը և զեկուցել հանձնաժողովի նախագահի տեղակալին:

6) Ճշգրտել տարահանման հանձնաժողովի անձնակազմի պատսպարման հաշվարկը, պատրաստականության բերման կարգը, անձնակազմի գործողությունները «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում և հասցնել դրանք հանձնաժողովի անդամներին ու աշխատանքային խմբերի անձնակազմերին:

7) Վարել ստացված և տրված հրամանների, կարգադրությունների ու զեկուցագրերի հաշվառման մատյանները:

55. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում՝

1) Ստուգել տարահանման հանձնաժողովի անձնակազմի հավաքը և զեկուցել հանձնաժողովի նախագահի տեղակալին,

2) Պատրաստել տարահանման հանձնաժողովի նախագահի կարգադրությունը և հասցնել ենթակա տարահանման մարմիններին,

3) Վարել ստացված և տրված հրամանների, կարգադրությունների ու զեկուցագրերի հաշվառման մատյանները,

4) Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբի պետի հետ համատեղ հավաքել և ընդհանրացնել ենթակա տարահանման մարմինների տվյալները բնակչության տարահանման, ինչպես նաև տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման ընթացքի մասին,

5) Իմանալ տարահանված բնակչության վիճակը, ինչպես են նրանք ապահովվում սննդամթերքով և առաջին անհրաժեշտության իրերով,

6) Իմանալ բոլոր ԺՏԿ-երի, ԵԲՎ-երի հնարավորությունները և պահպանել նրանց հետ անընդհատ կապ,

7) Ժամանակին զեկուցել տարահանման հանձնաժողովի նախագահին ստացված ահազանգերի, կարգադրությունների և զեկուցագրերի մասին:

XI. ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐԱԾՔԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՈՒՐՍ ԲԵՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՄԲԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

56. Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբի պետը ենթարկվում է տարահանման հանձնաժողովի նախագահին և տեղակալին: Նա հանդիսանում է խմբի անձնակազմի անմիջական պետը:

57. Նա պարտավոր է՝

1) Ճանաչել խմբի անձնակազմին և իմանալ նրանց խնդիրները.

2) Ունենալ խմբի հաստիքա-պաշտոնեական ցուցակը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը.

3) Իմանալ վտանգավոր տարածքից դուրս բերման ենթակա բնակչության թվաքանակը և նրանց հաշվառման կարգը.

4) Ունենալ անհրաժեշտ տեղեկություններ՝ ԺՏԿ-երի, ԵԲՎ-երի քանակը և տեղաբաշխման վայրերը.

5) Ունենալ տարբեր բնույթի արտակարգ իրավիճակների կանխատեսման դեպքում բնակչության տարահանման հաշվարկները.

6) Ունենալ տարահանման միջոցառումների համար պլանավորված տրանսպորտի հաշվարկը.

7) Անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց ֆունկցիոնալ պատրաստականությունների կատարման ուղղությամբ.

8) Մասնակցություն ցուցաբերել բնակչության տարահանման պլանի մշակմանը.

9) Մասնակցություն ցուցաբերել վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբերի անձնակազմների հետ անցկացվող պրակտիկ ուսուցումներին ու վարժանքներին.

58. Սպառնալիքի դեպքում՝

1) Իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) Ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները.

4) Կապ հաստատել վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման ենթակա հաշվառման խմբերի հետ.

5) Իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկություններ.

6) Ճշգրտել համայնքների վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբերի պատրաստականությունը տարահանման միջոցառումներին և զեկուցել տարահանման հանձնաժողովի նախագահին.

7) Մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը.

8) Կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

59. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում՝

1) Կազմակերպել խմբի անձնակազմի հավաքը և զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) Կազմակերպել հսկողություն տարահանման միջոցառումներին անցկացման ընթացքի նկատմամբ և պատրաստել ամփոփիչ տեղեկատվություն տարահանման միջոցառումների արդյունքների մասին.

4) Տարահանման հանձնաժողովի նախագահի համար հանձնաժողովի հետ միասին պատրաստել զեկույց տարահանման միջոցառումների ընթացքի մասին:

XII. ԱՆՎՏԱՆԳ ԳՈՏՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՄԲԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

60. Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խմբի պետը ենթարկվում է տարահանման հանձնաժողովի նախագահին և տեղակալին: Նա հանդիսանում է խմբի անձնակազմի անմիջական պետը:

61. Նա պարտավոր է՝

1) Ճանաչել խմբի անձնակազմին և իմանալ նրանց խնդիրները.

2) Ունենալ խմբի հաստիքա-պաշտոնեական ցուցակը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը.

3) Իմանալ անվտանգ տարածքներում տեղաբաշխման ենթակա բնակչության թվաքանակը և նրանց հաշվառման կարգը.

4) Ունենալ մարզի և համայնքների տարահանման մարմինների մասին անհրաժեշտ տեղեկություններ՝ ԺՏԿ-երի, ԵԲՎ-երի քանակը և տեղաբաշխման վայրերը.

5) Անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց ֆունկցիոնալ պատրաստականությունների կատարման ուղղությամբ.

6) Մասնակցություն ցուցաբերել բնակչության տարահանման պլանի մշակմանը.

7) Մասնակցություն ցուցաբերել անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման ենթակա խմբերի անձնակազմների հետ անցկացվող պրակտիկ ուսուցումներին ու վարժանքներին:

62. Սպառնալիքի դեպքում՝

1) Իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) Ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները.

4) Կապ հաստատել համայնքների վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբերի հետ.

5) Իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկություններ.

6) Ճշգրտել վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբերի պատրաստականությունը տարահանման միջոցառումներին և զեկուցել տարահանման հանձնաժողովի նախագահին.

7) Մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը.

8) Կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

63. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում՝

1) Կազմակերպել խմբի անձնակազմի հավաքը և զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) Կազմակերպել անվտանգ տարածքներում տարահանված բնակչության տեղաբաշխումը ԺՏԿ-երում.

4) Իրականացնել անվտանգ տարածքներում տեղաբաշխված բնակչության հաշվառումը.

5) Կազմակերպել հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման ընթացքի նկատմամբ և պատրաստել ամփոփիչ տեղեկատվություն տարահանման միջոցառումների արդյունքների մասին ըստ համայնքների.

6) Տարահանման հանձնաժողովի նախագահի համար հանձնաժողովի քարտուղարի հետ միասին պատրաստել զեկույց տարահանման միջոցառումների ընթացքի մասին:

XIII. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՄԲԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

64. Տրանսպորտային ապահովման խմբի պետը ենթարկվում է տարահանման հանձնաժողովի նախագահին և տեղակալին: Նա հանդիսանում է խմբի անձնակազմի անմիջական պետը:

65. Նա պարտավոր է՝

1) Իմանալ խմբի անձնակազմը և նրա խնդիրները.

2) Ունենալ խմբի հաստիքա-պաշտոնեական կազմը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը.

3) Իմանալ բնակչության տարահանման միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների թվաքանակը.

4) Իմանալ ավտոշարասյունների ստեղծման բազաները և նրանց ազդարարման, պատրաստականության բերման ու տարահանման միջոցառումներին ներգրավման կարգը.

5) Ունենալ մարզի և համայնքների տարահանման մարմինների մասին անհրաժեշտ տեղեկություններ.

6) Իմանալ տրանսպորտային ապահովման խմբերի տեղաբաշխման վայրերը և նրանց հետ կապի պահպանման կարգը.

7) Իմանալ տարահանման երթուղիների տեխնիկական բնութագիրը.

8) Անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց ֆունկցիոնալ պարտականությունների կատարման ուղղությամբ.

9) Տրանսպորտային ծառայության հետ համատեղ ապահովել նախապատրաստումը տարահանման միջոցառումներին:

66. Սպառնալիքի դեպքում՝

1) Իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Ճշգրտել խնդիրները խմբի անձնակազմի, ստանալ և նրանց բաժանել անհատական պաշտպանության միջոցները.

3) Կապ ստեղծել տրանսպորտային ծառայության և ենթակա տրանսպորտային ապահովման խմբերի հետ.

4) Իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկությունները.

5) Վերահսկել տրանսպորտային միջոցների նախապատրաստումը տարահանման միջոցառումներին.

6) ԱԻ ծագման դեպքում ճշգրտել բնակչության տարահանման պլանը և երթուղիները իրադրության հնարավոր տեսության համաձայն.

7) Մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը.

8) Կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

67. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում՝

1) Կազմակերպել խմբի անձնակազմի հավաքը.

2) Ճշգրտել տարածքում ստեղծված իրադրությունը և առկա տրանսպորտային միջոցների ու տարահանման երթուղիների վիճակը.

3) Ճշգրտել տարահանման երթուղիները և տարահանման մարմինների առջև դրված խնդիրները բնակչությանը վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ տարահանելու ուղղությամբ.

4) Ապահովել տրանսպորտային միջոցների հասցնումը ՏՀԿ-երին, ՏԸԿ-երին և տրանսպորտի նստեցման կետերին.

5) Կազմակերպել հսկողություն տրանսպորտային միջոցների աշխատանքի վրա: Ժամանակին տեղեկացնել տարահանման հանձնաժողովի նախագահին տրանսպորտի աշխատանքի գրաֆիկի խախտման մասին և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման համար:

XIV. ՍՆՆԴԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ, ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՄԲԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

68. Սննդամթերքների և նյութական արժեքների պաշարների հաշվառման խմբի պետը ենթարկվում է տարահանման հանձնաժողովի նախագահին և տեղակալին: Նա հանդիսանում է խմբի անձնակազմի անմիջական պետը:

69. Նա պարտավոր է՝

1) Ճանաչել խմբի անձնակազմին և իմանալ նրանց խնդիրները.

2) Ունենալ խմբի հաստիքա-պաշտոնեական ցուցակը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը.

3) Իմանալ տարահանման ենթակա բնակչության և նյութական արժեքների թվաքանակը, նրանց տեղաբաշխման վայրերը և հաշվառման կարգը.

4) Կոնկրետ ԱԻ դեպքում ըստ կանխատեսման նախօրոք պլանավորել տարահանմանը ենթակա նյութական արժեքների և նրանց համար նախատեսված տրանսպորտային միջոցների հաշվարկները.

5) Ունենալ օբյեկտների և նրանցում պահվող նյութական արժեքների պաշարների ցանկն ու թվաքանակը.

6) Ունենալ համայնքների տարահանման մարմինների մասին անհրաժեշտ տեղեկություններ՝ ԺՏԿ-երի, ԵԲՎ-երի, քանակը և տեղաբաշխման վայրերը.

7) Անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց պարտականությունների կատարման ուղղությամբ.

8) Մասնակցություն ցուցաբերել բնակչության տարահանման պլանի մշակմանը.

9) Մասնակցություն ցուցաբերել սննդամթերքների և նյութական արժեքների պաշարների հաշվառման ենթակա խմբերի անձնակազմների հետ անցկացվող պրակտիկ ուսուցումներին ու վարժանքներին:

70. Սպառնալիքի դեպքում՝

1) Իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) Ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները.

4) Կապ հաստատել համայնքների սննդամթերքների և նյութական արժեքների պաշարների հաշվառման խմբերի հետ.

5) Իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկություններ.

6) Ճշգրտել սննդամթերքների և նյութական արժեքների պաշարների հաշվառման ենթակա խմբերի պատրաստականությունը տարահանման միջոցառումներին և զեկուցել տարահանման հանձնաժողովի նախագահին.

7) Մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը.

8) Կազմակերպել անձնակազմի հերթապահությունը.

9) Ճշգրտել հնարավոր խոցման օջախից նյութական արժեքների դուրս բերման համար նախատեսված տրանսպորտային միջոցների թվաքանակը:

71. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում՝

1) Կազմակերպել խմբի անձնակազմի հավաքը և զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) Նյութական արժեքների պաշարների տարահանման անհրաժեշտության դեպքում ապահովել դուրս բերումը, հաշվառումը, իրականացնել:

XV. ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԳՈՏԻ ԴՈՒՐՍ ԲԵՐՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՄԲԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

72. Հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման հաշվառման խմբի պետը ենթարկվում է տարահանման հանձնաժողովի նախագահին և տեղակալին: Նա հանդիսանում է խմբի անձնակազմի անմիջական պետը:

73. Նա պարտավոր է՝

1) Ճանաչել խմբի անձնակազմին և իմանալ նրանց խնդիրները.

2) ՈՒնենալ խմբի հաստիքա-պաշտոնեական ցուցակը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգ.

3) Իմանալ վտանգավոր տարածքից դուրս բերման ենթակա հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների թվաքանակն ու նրանց հաշվառման կարգը.

4) ՈՒնենալ մարզի և համայնքների տարահանման մարմինների և հիվանդանոցների մասին անհրաժեշտ տեղեկություններ.

5) ՈՒնենալ հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների տարահանման համար պլանավորված տրանսպորտային միջոցների հաշվարկը.

6) Անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց ֆունկցիոնալ պարտականությունների կատարման ուղղությամբ.

7) Մասնակցություն ցուցաբերել բնակչության տարահանման պլանի մշակմանը.

8) Մասնակցություն ցուցաբերել հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների հետ անցկացվող ուսուցումներին ու վարժանքներին:

74. Սպառնալիքի ստանալու՝

1) Իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) Ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները.

4) Կապ հաստատել հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման ենթակա հաշվառման խմբերի հետ.

5) Իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկություններ.

6) Ճշգրտել հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման հաշվառման խմբերի պատրաստականությունը և զեկուցել տարահանման հանձնաժողովի նախագահին.

7) Մշտապես ղեկավարել անձնակազմի աշխատանքը.

8) Կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

75. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում՝

1) Կազմակերպել անձնակազմի հավաքը և զեկուցել տարահանման քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) Կազմակերպել տարահանված հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների տեղաբաշխումը անվտանգ գոտում գտնվող հիվանդանոցներում և այլ նախօրոք պլանավորված շինություններում.

4) Կազմակերպել հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման ընթացքի նկատմամբ և պատրաստել ամփոփիչ տեղեկատվություն տարահանման միջոցառումների արդյունքների մասին

5) Տարահանման հանձնաժողովի նախագահի համար հանձնաժողովի քարտուղարի հետ միասին պատրաստել զեկույց տարահանման միջոցառումների ընթացքի մասին:

Հավելված 3.
Լոռու մարզի տարահանման պլանի

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Հ/հ	Տարահանման ենթակա բնակավայրը			Տարահանվում են տրանսպորտի հետևյալ տեսակներով			Տրամադրվում են տրանսպորտային միջոցներ (միավոր)				Տարահանման ժամկետները (Ժ+)
	Անվանումը	Բնակչության թվաքանակը		Երկաթգծով	Ավտոմեքենայով	Հետիոտն	Գնացքի վագոններ	Ավտոտրանսպորտ (քանակը/տարողությունը)			
		Ընդամենը	Տարաան վումեն					մարդատար	ավտոբուս	բեռնատար	
1.	բն.Գոգավան	51	30	-	30	-	-	3/10	1/20	6/18	6:00-7:45
2.	բն. Ապավեն	92	51	-	51	-	-	-	4/92	10/35	6:00-7:30
3.	բն. Արծնի	420	269	-	269	-	-	5/25	12/244	6/147	6:00-7:30
4.	բն. Պաղաղբյուր	106	62	-	62	-	-	5/25	2/37	2/35	6:00-8:30
5.	բն. Ջիլիզա	101	63	-	63	-	-	9/38	1/25	10/45	6:00-8:30
ԸՆԴԱՄԵՆԸ		770	475	-	475	-	-	22/98	20/377	34/280	

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Հ/հ	Տարահանման ենթակա բնակավայրը			Տարահանվում են տրանսպորտի հետևյալ տեսակներով			Տրամադրվում են տրանսպորտային միջոցներ (միավոր)				Տարահանման ժամկետները (Ժ+)
	Անվանումը	Բնակչության թվաքանակը		Երկաթգծով	Ավտոմեքենայով	Հետիոտն	Գնացքի վագոններ	Ավտոտրանսպորտ (քանակը/տարողությունը)			
		Ընդամենը	Տարաան վումեն					մարդատար	ավտոբուս	բեռնատար	
1.	գ.Դեբեդավան	621	285	-	285	-	-	9/45	20/240	57/171	6:00-7:45
2.	գ. Դեղձավան	269	125	-	125	-	-	6/24	5/101	25/75	6:00-7:30
3.	գ. Բագրատաշեն	2884	1329	-	1329	-	-	10/40	60/1289	266/798	6:00-7:30
4.	գ. Պտղավան	929	344	-	344	-	-	5/25	16/319	69/207	6:00-8:30
5.	գ. Դովեղ	560	203	-	203	-	-	9/42	8/161	41/123	6:00-8:30
ԸՆԴԱՄԵՆԸ		5263	2286		2286			39/176	109/2110	458/1374	

Հավելված 3.1.
Լոռու մարզի տարահանման պլանի

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ

Անհրաժեշտ տրանսպորտային միջոցների հաշվարկները և նրանց բաշխումը

Հ հ	Բնակավայրի անվանումը, Ավտոշարասյան N, ավագը	Տարահանվող բնակչությունը	Ընդամենը դուրս են բերվում (մարդ)	Ավտոշարասյան կազմը (քանակը/տարողությունը)			Հավաքի ժամը (Ժ+)	Ծավալման կետը	Շարժվելու ժամը (Ժ+)	Տրանսպորտային միջոցներ հատկացնող մարմինը	Ժամանելու ժամը (Ժ+)
				մարդատար	ավտոբուս	բեռնատար					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	բն. Գոգավան N 1 Վարչական ղեկավար	30	30	3/10	1/20	6/18	6:00 7:30	Գոգավանի հրապարակ	6:30 9:00	Գոգավանի Վարչական շենք	7:45 10:45
2.	բն. Ապավեն N 2 Վարչական ղեկավար	51	51	-	4/92	10/35	6:00	Ապավենի հրապարակ	7:00	Ապավենի Վարչական շենք	8:30
3.	բն. Արծնի N 3 Վարչական ղեկավար	269	269	5/25	12/244	6/147	6:00	Արծնու հրապարակ	6:30	Արծնիի Վարչական շենք	7:30
4.	բն. Պաղաղբյուր N 4 Վարչական ղեկավար	62	62	5/25	2/37	2/35	6:00	Պաղաղ-բյուրի հրապարակ	6:30	Պաղաղբյուրի Վարչական շենք	8:30
5.	բն. Ջիլիզա N 5 Վարչական ղեկավար	63	63	9/38	1/25	10/45	6:00	Ջիլիզայի հրապարակ	6:30	Ջիլիզայի Վարչական շենք	8:30

Հավելված 3.1.
Լոռու մարզի տարահանման պլանի

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ

Անհրաժեշտ տրանսպորտային միջոցների հաշվարկները և նրանց բաշխումը

Հ հ	Բնակավայրի անվանումը, Ավտոշարասյան N, ավագը	Տարա-հանվող բնակ-չությունը	Ընդամենը դուրս են բերվում (մարդ)	Ավտոշարասյան կազմը (քանակը/տարողությունը)			Հա-վաքի ժամը (Ժ+)	Ծավալման կետը	Շարժ-վելու ժամը (Ժ+)	Տրանսպորտա-յին միջոցներ հատկացնող մարմինը	Ժամա-նելու ժամը (Ժ+)
				մարդ ատար	ավտոբ ուս	բեռնա-տար					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	բն. Դեբեդավան N 1 Վարչական ղեկավար	285	285	9/45	20/240	57/171	6:00 7:30	Գոգավանի հրապարակ	6:30 9:00	Դեբեդավանի Վարչական շենք	7:45 10:45
2.	բն. Դեղձավան N 2 Վարչական ղեկավար	125	125	6/24	5/101	25/75	6:00	Ապավենի հրապարակ	7:00	Ապավենի Վարչական շենք	8:30
3.	բն. Բագրատաշեն N 3 Վարչական ղեկավար	1329	1329	10/40	60/1289	266/798	6:00	Արծնու հրապարակ	6:30	Արծնիի Վարչական շենք	7:30
4.	բն. Պտղավան N 4 Վարչական ղեկավար	344	344	5/25	16/319	69/207	6:00	Պաղաղ-բյուրի հրապարակ	6:30	Պաղաղբյուրի Վարչական շենք	8:30
5.	բն. Դովեղ N 5 Վարչական ղեկավար	203	203	9/42	8/161	41/123	6:00	Ջիլիզայի հրապարակ	6:30	Ջիլիզայի Վարչական շենք	8:30

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒ
(ՏԱՐԱՀԱՆՎՈՒՄ Է

Անհրաժեշտ տրանսպորտային միջոցների

Հ/Հ	Տարահանման ենթակա բնակավայրերի անվանումը	Հավաքակետի համարը	Տարահանվող բնակչության թիվը	Տարահանվողների հավաքի ժամը (Ժ+)	Մինչև բարձման կետ ավտոտրանսպորտային միջոցների հատկացնող մարմինը	Կայարան ժամանելու ժամը	Ավտոտրանսպորտային միջոցները (քանակը/տարողությունը)		
							Մարդատար	ավտոբուս	Բեռնատար
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	բն. Բագրատաշեն	1	1329	10.30	Բագրատաշենի վարչական ղեկավար	11.00	10/40	60/1289	266/798

Հավելված 3.2.
Լոռու մարզի տարահանման պլանի

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՎ)

հաշվարկները և նրանց բաշխումը

Կայարա-նից շարժվելու ժամը	Բարձման կետը	Վագոնների քանակը և տարողու-թյունը	Իջեցման կետը	Ժաման-ման ժամը (Ժ+)	Իջեցման կետից տրանսպորտային միջոցներ հատ-կացնող մարմինը	Ավտոտրանսպորտային միջոցները (քանակը/տարողությունը			Հեռա-վորութ. իջեց-ման կետից	Ընդու-նող բնակա-վայրը	Ժա-ման-ման ժամը (Ժ+)
						մար-դատար	ավտո-բուս	Բեռնա-տար			
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
12.30		27	Թումանյան	13.50	Թումանյան համայնք	10/40	60/1289	266/798	0	Բն. Լորուտ	14.00

Հավելված 3.3.
Լոռու մարզի տարահանման պլանի

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԱՐԿ

Հ/h	Տարահանման ենթակա բնակավայրերը			Ընդունող բնակավայրը		Երթուղու երկարությունը (կմ)	Շարժման երթուղին
	Անվանումը	բնակչության թվաքանակը		Անվանումը	Բնակչությունը		
		ընդամենը	տարահանվում են				
1.	բն.Գոգավան	51	30	Պուշկինո	327	42	Գոգավան-Տաշիր-Ստեփանավան-Պուշկինո
2.	բն. Ապավեն	92	51	Կուրթան	1673	43	Դաշտադեմ-Տաշիր-Ստեփանավան-Կուրթան
3.	բն. Արծնի	420	269	Կուրթան	1673	46	Մեղվահովիտ-Տաշիր-Ստեփանավան-Կուրթան
4.	բն. Պաղաղբյուր	106	61	Լոռի Բերդ	396	39	Պաղաղբյուր-Տաշիր-Ստեփանավան-Լոռի Բերդ
5.	բն. Ջիլիզա	101	63	Արևածագ	824	49	Ջիլիզա-Ալավերդի-Արևածագ
ԸՆԴԱՄԵՆԸ					4893		

Հավելված 3.3.
Լոռու մարզի տարահանման պլանի

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԱՐԿ

Հ/h	Տարահանման ենթակա բնակավայրերը			Ընդունող բնակավայրը		Երթուղու երկարությունը (կմ)	Շարժման երթուղին
	Անվանումը	բնակչության թվաքանակը		Անվանումը	Բնակչությունը		
		ընդամենը	տարահանվում են				
1.	բն.Դեբեդավան		285	Քարինջ	612	55	Դեբեդավան-Քարինջ
2.	բն. Դեղձավան		125	Քարինջ	612	49	Դեղձավան-Քարինջ
3.	Բն. Բագրատաշեն		1329	Լորուտ	869	80	Բագրատաշեն-Լորուտ
4.	Բն. Պտղավան		344	Շամուտ	227	78	Պտղավան- Շամուտ
5.	Բն. Դովեղ		203	Ձորագյուղ	241	65	Դովեղ-Ձորագյուղ
ԸՆԴԱՄԵՆԸ			2286		2561		

Հավելված 3.4.
Լոռու մարզի տարահանման պլանի

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՑ ՏԱՐԱՀԱՆՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՀԱՇՎԱՐԿ

Հ/հ	Տարահանման ենթա-կա բնակավայրի անվանումը	Բնակելի ֆոնդում տեղա վորվող մարդկանց թիվը		Վերաբնակեցման համար նախատեսված բնակավայրերի, փողոցների անվանումը, տների համարները	Վերաբնակեցման կազմակերպման պատասխանատուները	Նշում ներ
		ընտանիքն երի թիվը	մարդկանց թիվը			
1.	2.	3.	4.	5.	6.	7.
1.	բն.Գոգավան	8	30	Պուշկինո բնակավայրի բնակիչների տները, յուրաքանչյուր տարահանվող ընտանիքին մեկ տուն	Համայնքի տարահանվածներին ընդունման հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ	
2.	բն. Ապավեն	11	51	Կուրթան բնակավայրի բնակիչների տները, յուրաքանչյուր տարահանվող ընտանիքին մեկ տուն	Համայնքի տարահանվածներին ընդունման հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ	
3.	բն. Արծնի	67	269	Կուրթան բնակավայրի բնակիչների տները, յուրաքանչյուր տարահանվող ընտանիքին մեկ տուն	Համայնքի տարահանվածներին ընդունման հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ	
12.	բն. Պաղաղբյուր	16	62	Լոռի Բերդ բնակավայրի բնակիչների տները, յուրաքանչյուր տարահանվող ընտանիքին մեկ տուն	Համայնքի տարահանվածներին ընդունման հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ	
13.	բն. Ջիլիզա	16	63	Արևաձագ բնակավայրի բնակիչների տները, յուրաքանչյուր տարահանվող ընտանիքին մեկ տուն	Համայնքի տարահանվածներին ընդունման հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ	
ԸՆԴԱՄԵՆԸ			475			

Հավելված 3.4.
Լոռու մարզի տարահանման պլանի

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՑ ՏԱՐԱՀԱՆՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՀԱՇՎԱՐԿ

Հ/հ	Տարահանման ենթա-կա բնակավայրի անվանումը	Բնակելի ֆոնդում տեղա վորվող մարդկանց թիվը		Վերաբնակեցման համար նախատեսված բնակավայրերի, փողոցների անվանումը, տների համարները	Վերաբնակեցման կազմակերպման պատասխանատուները	Նշում ներ
		ընտանիքն երի թիվը	մարդկանց թիվը			
1.	2.	3.	4.	5.	6.	7.
4.	բն.Դեբեդավան		285	Քարինջ բնակավայրի բնակիչների տները, յուրաքանչյուր տարահանվող ընտանիքին մեկ տուն	Համայնքի տարահանվածներին ընդունման հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ	
5.	բն. Դեղձավան		125	Քարինջ բնակավայրի բնակիչների տները, յուրաքանչյուր տարահանվող ընտանիքին մեկ տուն	Համայնքի տարահանվածներին ընդունման հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ	
6.	բն. Բագրատաշեն		1329	Լորուտ բնակավայրի բնակիչների տները, յուրաքանչյուր տարահանվող ընտանիքին մեկ տուն	Համայնքի տարահանվածներին ընդունման հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ	
14.	բն. Պտղավան		344	Շամուտ բնակավայրի բնակիչների տները, յուրաքանչյուր տարահանվող ընտանիքին մեկ տուն	Համայնքի տարահանվածներին ընդունման հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ	
15.	բն. Դովեղ		203	Ձորագյուղ բնակավայրի բնակիչների տները, յուրաքանչյուր տարահանվող ընտանիքին մեկ տուն	Համայնքի տարահանվածներին ընդունման հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ	
ԸՆԴԱՄԵՆԸ			2286			

Հավելված 4.
Լոռու մարզի տարահանման պլանի

ՄԵԾԱՎԱՆԻ ՋՐԱՄԲԱՐԻ ՊԱՏՎԱՐԻ ՓԼՈՒԶՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՋՐԱԾԱԾԿՄԱՆ ԳՈՏՈՒՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԱՐԿ

ՋՐԱՄԲԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ								
Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ջրաղբյուրը	Բնութագրող պարամետրեր					
			ծավալը (մլն. մ3)	հայելու մակերեսը (հա)	պատվարի բարձրությունը (մ)	առավելագույն խորությունը (մ)	միջին տարեկան հոսքը (մլն. մ3)	Ջրածածկման տևողությունը (ժամ)
1.	Մեծավանի	Տաշիր	5.4	330	7	5.5	40	2.24

Ջրամբարի անվանումը	Ջրածածկման տարածքը (կմ^2)	Ջրածածկվող բնակավայրերը	Բնակչության քանակը		Տարահանման ձևը	Ծավալման վայրը	Տրանսպորտ հատկացնող մարմինը	Մեքենաների քանակը	Տեղաբաշխման վայրը	Եղթանցուղի տևողությունը (կմ)
			ընդհանուր	Տարահանվում են						
Մեծավանի	2.6	Ձյունաշող	114	12	ավտոտրան	Համայնքից 500 մ արևմուտք	-		Համայնքի տարածք	0,5
		Տաշիր	7256	570	հետիոտն	Համայնքի տարածք	-	-	Համայնքի տարածք	1
		Սարատովկա	338	17	հետիոտն	Համայնքի տարածք	-	-	Համայնքի տարածք	0.2

Հավելված 5.
Լոռու մարզի տարահանման պլանի

«ՎԱՆԱՁՈՐԻ ՔԻՄՊՐՈՄ» ՓԲԸ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԻՄԿՈՄԲԻՆԱՏԻ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԱԿԱՎՏԱՆԳ ՏԱՐԱԾՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԱՐԿ

«ՎԱՆԱՁՈՐԻ ՔԻՄՊՐՈՄ» ՎԱՆԱՁՈՐԻ ՔԻՄԿՈՄԲԻՆԱՏ								
ՈՒՆԹՆ-ի անվա-նունը	Թափված նյութի քանակը (տ)	Վարակման ամպի խորությունը (մ)			Տարահանվող բնակչության և անձնակազմի թիվը	Տարահանման ձևը, տեղաբաշխման վայրը	Հեռավորու-թյունը վտանգավոր գոտուց (կմ)	Նշումներ
		Ընդհանուր	Առաջնա-յին ամպով	Երկրորդա-յին ամպով				
Ի. Քամու արագությունը 2մ/վրկ հարավից (ինվերսիա)								
ամո-նիակ	5	1346	450	896		հետիոտն՝ վտանգավորից տարածքից անվտանգ տարածք	մինչև 1 կմ	
	5	897	300	597				խիտ բնա-կեցված տարածք
Ի. Քամու արագությունը 2մ/վրկ արևմուտքից (ինվերսիա)								
ամո-նիակ	30	5492	1266	4226		հետիոտն՝ վտանգավորից տարածքից անվտանգ տարածք	մինչև 1 կմ	
	30	3661	844	1817				խիտ բնա-կեցված տարածք

ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ ՈՒՐՎԱԳԻԾ



Հավելված 6.
Լոռու մարզի տարահանման պլանի

ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ



Հավելված 7.
Լոռու մարզի տարահանման պլանի

ԳՐԱՖԻԿ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ,
ԵՐԲ ՄՏՑՎԱԾ Է «ԼՐԻՎ» ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Հ/Հ	ՊԱՇՏՈՆԸ	1 ՕՐ	2 ՕՐ	3 ՕՐ	4 ՕՐ	5 ՕՐ	6 ՕՐ
1.	ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ	ժ + 00 - 8.00			00 - 8.00		
2.	ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ	8.00-16.00			8.00 -16.00		
3	ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ	16.00 - 24.00			16.00 - 24.00		
4	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ		00 - 8.00			00 - 8.00	
5	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ		8.00-16.00			8.00 -16.00	
6	ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ		16.00 - 24.00			16.00 - 24.00	
7.	ԿՈՄՈՒՆԱԼ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ			00 - 8.00			00 - 8.00
8	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ. ԿԵՆԴ. ԵՎ ԲՈՒՅՍ. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ			8.00 -16.00			8.00 -16.00
9	ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԼՈՒՍԱ-ՔՈՂԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐ-ԿԱՅԱՑՈՒՑԻՉ			16.00 - 24.00			16.00 - 24.00

Հավելված 8.
Լոռու մարզի տարահանման պլանի

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Հ/Հ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԺԱՄԱՆԱԿԸ														ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՏԱՐՈՂ
		ՐՈՊԵՆԵՐ				ԺԱՄԵՐ								ՕՐԵՐ		
		15	30	45	60	2	4	6	10	14	18	22	24	2	3	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ա) ՔՊ «ԼՐԻՎ» ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՄՏՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ																
1	Տարահանման հանձնաժողովի անձնակազմի ազդարարում և հավաք:															Հանձնաժողովի նախագահ
2	Մարզի ՔՊ պետից խնդիրների ստացում և հանձնաժողովի անդամներին ծանոթացում:															Հանձնաժողովի նախագահ
3	Կարգադրության նախապատրաստում և քաղաքային և գյուղական համայնքների տարահանման մարմիններին հասցնում															Հանաձնաժողովի քարտուղար
4	Շուրջօրյա հերթապահության սահմանում:															Նախագահի տեղակալ
5	Ենթակա տարահանման մարմինների հետ կապի հաստատում:															Կապի ծառայության ներկայացուցիչ
6	Տարահանման հանձնաժողովի անդամների համար պաշտպանության անհատական միջոցների ստացման կազմակերպում:															Նախագահի տեղակալ, ծառայության ներկայացուցիչ
7	Մարզի տարահանման պլանի ճշգրտում:															Հանձնաժողով
8	Հսկողության սահմանում տրանսպորտային միջոցների բարձման (բեռնաթափման) կետերի վրա	ԱՆԸՆԴՀԱՏ՝ ՄԻՆՉԵՎ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԱՎԱՐՏԸ														Հանձնաժողով

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
9	Հսկողության իրականացում ենթակա տարահանման մարմինների աշխատանքային պարտականությունների կատարման վրա:															Հանձնաժողովի նախագահ
10	Զեկուցել մարզի ՔՊ պետին տարահանման մարմինների պատրաստության մասին:	ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ 2 ԺԱՄԸ ՄԵԿ														Հանձնաժողովի նախագահ
Բ) ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ																
1	Տարահանման մարմինների ազդարարում և հավաք:															Հանձնաժողովի նախագահ
2	Խնդիրների ստացում և հաղորդում տարահանման մարմինների անդամներին:															Հանձնաժողովի նախագահ
3	Տարահանման միջոցառումների պլանների ճշգրտում:	ԱՆԸՆԴՀԱՏ՝ ՄԻՆՉԵՎ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԱՎԱՐՏԸ														Հանձնաժողով
4	Տարահանվող բնակչության բազմակողմանի ապահովման կազմակերպում:	ԱՆԸՆԴՀԱՏ՝ ՄԻՆՉԵՎ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԱՎԱՐՏԸ														Հանձնաժողով
5	Տարահանման ընթացքի վրա հսկողության սահմանում և օգնության կազմակերպում:	ԱՆԸՆԴՀԱՏ՝ ՄԻՆՉԵՎ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԱՎԱՐՏԸ														Հանձնաժողովի նախագահ
6	Ենթակա տարահանման մարմիններից զեկույցների ընդունում:	ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ 2 ԺԱՄԸ ՄԵԿ														Հանաձնաժողովի քարտուղար
7	Զեկուցել մարզի ՔՊ պետին տարահանման ընթացքի և ավարտի մասին:	ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ 2 ԺԱՄԸ ՄԵԿ														Հանձնաժողովի նախագահ

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պլանում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

ա) **տարահանման հանձնաժողով՝** մարզպետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբ, որը կազմակերպում ու ղեկավարում է մարզի բնակչության և կազմակերպությունների տարահանման միջոցառումները.

բ) **տարահանման հավաքակայան՝** տարահանվող բնակչության ընդունման և հաշվառման հավաքակետ.

գ) **ընդունման հավաքակայան՝** հավաքատեղ, որտեղ կատարվում է տարահանված բնակչության ընդունումը, հաշվառումը և բաշխումն ըստ ժամանակավոր կացարանների.

դ) **ընդհանուր տարահանում՝** տվյալ տարածքի (բնակավայրի) ամբողջ բնակչության տարահանում.

ե) **մասնակի տարահանում՝** մինչև 16 տարեկան երեխաների, հղի և մինչև 8 տարեկան երեխա ունեցող կանանց, 8-16 տարեկան երեխա ունեցող այն կանանց, որոնց ընտանիքի կազմում չկան տարահանման ենթակա՝ աշխատունակ անդամներ, հաշմանդամների և կենսաթոշակառուների տարահանում.

զ) **տարահանման երթուղի՝** բնակչության տարահանման և տեղաբաշխման բնակավայրերը միացնող ճանապարհ (ճանապարհահատված).

է) **տարահանման ավտոշարասյուն՝** տարահանման հավաքակայանից (բնակավայրից) ընդունման հավաքակայան (բնակավայր) մեկնող երկու կամ ավելի ավտոմեքենայից բաղկացած շարասյուն.

ը) **տարահանման հետիոտն շարասյուն՝** տարահանման հավաքակայանից (բնակավայրից) ընդունման հավաքակայան (բնակավայր) հետիոտն կազմակերպված խումբ.

թ) **տարահանման երկաթուղային շարասյուն՝** չվացուցակային կամ չվացուցակից դուրս երկաթուղային շարժակազմ, որը նախատեսվում է տարահանվող բնակչությանը տեղափոխելու համար.

ժ) **տարահանման պլան՝** նախապես մշակված փաստաթուղթ, որով կանոնակարգվում են մեկ տարածքից (բնակավայրից, օբյեկտից) մեկ այլ տարածք բնակչության տարահանման միջոցառումները.

ի) **վտանգավոր տարածք՝** տեղանք կամ առանձին բնակավայր, օբյեկտ, որտեղ արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացել կամ կարող են առաջանալ մարդկանց կյանքի, առողջության և բնականոն կենսագործունեության վրա բացասաբար ազդող գործոններ:

Հավելված 11.
Լոռու մարզի տարահանման պլանի

ՀԱՇՎԱՐԿ
Լոռու մարզի սահմանամերձ գոտուց տարահանված բնակչության երկարատև տեղակայման կետերի և բնակչության ամրագրման

	Բնակավայր	Բնակչության քանակը		Ընդունող բնակավայր	Տեղաբաշխման կետեր	
		Ընդամենը	Տարահանվող		Ժամանակավոր	Երկարատև
1.	Գոգավան	51	30	Պուշկինո	ակումբ 30	բնակելի ֆոնդ 30
2.	Ապավեն	92	51	Կուրթան	դպրոց 51	բնակելի ֆոնդ 51
3.	Արծնի	420	269	Կուրթան	դպրոց - 169, մանկապարտեզ 100	բնակելի ֆոնդ 269
4.	Պաղաղբյուր	106	62	Լոռի Բերդ	դպրոց 62	բնակելի ֆոնդ – 62
5.	Ջիլիզա	101	63	Արևաձագ	դպրոց - 63	Բնակելի Ֆոնդ - 63
Ընդամենը		770	475			

Ճ Շ Գ Ր Տ Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ

Հ/հ	Ամիս, ամսաթիվ	Ճշգրտման տվյալները	Էջ	Կատարող	Ստորագրություն	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.	7.